ՀՏԴ 371.31: 809.198.1 Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա

ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԵՐԻՆ

Ծովինար ՀԱՍՐԱԹՅԱՆ

Բանալի բառեր *– բառապաշար, զարգացում, ուսուցում, նոր Կրթակարգ, վարժություններ, ուղղագրական աշխատանքներ, մեթոդներ, ինքնուրույնություն, բառացանկեր, հմտություններ, կարողություն:*

Ключевые слова- *словарный запас, развитие, обучение, новая учебная программа, упражнения, методы, умение, навыки, работа над правописанием, список слов, самостоятельность.*

Keywords *-vocabulary development, training, knack, new curriculum, exercises, methods, skills, work on the spelling, word list, independence.*

Ц.Асратян

Обогащение словарного запаса на уроках по родному языку

В данной статье обсуждаются способы обогащения словарного запаса учеников некоторыми методами и средствами. В книгах по родному языку 5-6–х классов размещены некоторые задания с особыми пометками. Основа этих заданий - высказывание собственного мнения, словообразовательный анализ, выполнение требований при работе по орфографии, умение, навыки, словарный запас и самостоятельность. Новизна этого раздела целенаправлена на решение обсуждаемых проблем.

Ts.Asratyan

Enrichment of Vocabulary at the Native Language Lessons

This article discusses ways of enrichment of the learners' vocabulary by means of some techniques and tools. In the books of the native language of the 5-6-th classes some tasks with special marks are placed.. A basis of these tasks - the statement of own opinion, the word-formation analysis, implementation of requirements during the work on spelling, ability, skills, vocabulary and autonomy. The novelty of this section is directed to the solution of the discussed problems.

Հանրակրթական դպրոցներում մայրենի լեզվի ուսուցման ուշագրավ պահանջներից է սովորողների բառապաշարի, խոսքի զարգացումը: Գաղտնիք չէ, որ աշակերտների մեծամասնությունը խիստ դժվարանում է գրական հայերենով ազատ խոսել, արտահայտվել պատշաճ մակարդակով, ինչպես պահանջում է քերականությունը: Այդ հարցն էլ մտահոգում է շատ շատերին և ստիպում գտնել ելք՝ ստեղծված իրավիճակից դուրս գալու, գործադրելու մեթոդական այն հնարները, որոնք կնպաստեն վերջիններիս զարգացմանը: Օրախնդիր հարցը մտահուզել է նաև դասագրքերի հեղինակներին: Թերևս ամենամեծ օգնությունը ուսուցչին կատարվեց հենց նրանց կողմից:

Համաձայն ՀՀ նոր Կրթակարգի և հանրակրթության պետական առարկայական չափորոշչի ու միջին դպրոցի հայոց լեզվի ծրագրի՝ 5-6 րդ դասարանների մայրենիի դասընթացի հիմնական նպատակադրումը աշակերտի բանավոր և գրավոր խոսքի հետագա զարգացումն է:

Փորձենք անդրադառնալ մայրենիի դասագրքերում տեղ գտած որոշ առաջադրանքների:Անդրադարձը մայրենիին պատահական չէ, քանզի (տարրական դպրոցից հետո) այս դասարաններում է ձևավորվում, հղկվում աշակերտների խոսքը: Մայրենիում տեղ գտած առաջադրանքները ինքնանպատակ չեն, դրանց ճիշտ կատարումը յուրովի է նպաստում աշակերտների խոսքի զարգացմանը, միայն թե այն պետք է կատարվի ըստ ծրագրային պահանջի և ուսուցչի հսկողությամբ: Անելիքները բավական շատ են և բազմաբնույթ: Ուսուցիչը պետք է կարողանա հմտորեն իրագործել ծրագրային պահանջները՝ ապահովելով լեզվական կարողությունների և խոսքի զարգացման հարցը: Յուրաքանչյուր աշխատանքի կատարման հիմքում պետք է տեսնել խոսքի զարգացման, բառապաշարի հարստացման խնդիրը: Համատեղելով այս երկու կարևոր խնդիրները՝ ուսուցիչը հանգուցալուծում կտա մեզ հուզող հարցերին:

Մայրենիի դասագրքերում, բացի վարժություններից, բառային և տեքստային աշխատանքներից, կան նաև այլ բնույթի առաջադրանքներ, որոնք ներկայացվում են պայմանական նշաններով: Ասենք՝ գրված է ԱԲ ,առանձին՝ Ա, պատկերված է դասագիրք՝ Ա տառով: Առաջին հայացքից պարզ և կարծես թե մեկ պատասխան պահանջող այդ առաջադրանքները երբեք երկրորդական պլան չպետք է մղվեն, անուշադրության չպետք է մատնվեն, քանի որ այն կատարելու ընթացքում երեխաները կհամոզվեն, որ նրանց հիմքում ընկած են սեփական կարծիքը հայտնելու, բառակազմական վերլուծություններ, ուղղագրական աշխատանքներ կատարելու պահանջները: Չի բացառվում, որ այդ պարզ թվացող առաջադրանքներն ավելի մեծ ներդրում կունենան աշակերտի բառապաշարի հարստացման գործում:

ԱԲ պայմանական նշանի տակ տրվող առաջադրանքները հիմնականում լեզվական առաջադրանքներ են, որոնք ստիպում են նախ՝ յուրացրած լեզվական նյութը կիրառել գործնականում, ապա՝ այդ մասին խոսել, գրածը գրագետ ներկայացնել:Առանց ուղղագրության, բառակազմության թեմաների յուրացման և դրանց գործնական կիրառման հնարավոր չէ անթերի տիրապետել մայրենի լեզվին:

Բերենք մի քանի առաջադրանքներ[1].

1.Թուր, հուր, բուն բառերի մեջ յ հնչյուն ավելացրու. Ի՞նչ բառեր ստացար: Այդ բառերը գործածիր նախադասությունների մեջ:

2.«Մուրացկանը և հարուստը» հեքիաթից ու դասագրքի բառարաններից օ-ով և ո-ով սկսվող բառեր դուրս գրիր:

3. Կարո՞ղ ես բացատրել ուղղագրություն և ուղղախոսություն բառերը: Ո՞րն է այս բառերի առաջին արմատը: Դրանով բառեր կազմիր:

4.Առանձնացրու վերնատուն և ավանդազրույց բառերի բաղադրիչները:

5. Բառակազմական վերլուծության ենթարկիր անզոր և զորություն բառերը:

Դասագիրքը Ա տառով պայմանական նշանի տակ առաջադրանքները բոլորովին այլ բնույթի են : Պահանջվում է ընթերցել, վերհիշել, ինքնուրույն կապակցված խոսք կազմել , արտահայտվել, եզրահանգումներ ու մտահանգումներ անել, բանավիճել; Աշակերտները ստիպված են լինում առնչվել գրքի, գրականության հետ, ընկալել գեղեցիկը, յուրացնել նորանոր արահայտություններ, մտքեր:

Բերենք այդ առաջադրանքներից ևս[2].

1.Ի՞նչ գիտես այբուբենի մասին: Պատմիր մեր գրերի և նրա ստեղծող Մեսրոպ Մաշտոցի մասին:

2.Ի՞նչ կանես, եթե շատ փող ունենաս:

3.Շուն սիրու՞մ ես, գուցե պահու՞մ ես: Պատմիր քո շան մասին ;

4.Ընկերներիդ հետ լսիր «Կռունկ» երգը և պատմիր քո զգացածի մասին :

5.Պատմիր մանկությանդ առաջին հուշը:

6.Ի՞նչ գիտես ՀՀ –ի ամենաբարձր լեռան մասին և այլն:

Ինչպես տեսնում ենք, այդ առաջադրանքները աշակերտներին մղում են ընթերցելու, ինքնուրույն դատողություններ, վերլուծություններ անելու, սեփական կարծիքներ, տեսակետներ որևէ երեույթի մասին հայտնելու, ստեղծագործելու, կապակցված խոսք կազմելու, ելույթ ունենալու և այլն:

Մեր նպատակը, սակայն, դասագրքերի առաջադրանքները վեր հանելը չէ, այլ բացահայտել դրանց ճիշտ ու արդյունավետ կատարելու մեթոդները, ինչպես նաև՝ դրանց կատարման միջոցով համալրել աշակերտի բառաֆոնդը: Ուսուցիչը մեթոդներն ընտրելու հարցում ազատ է, քանզի ճիշտ ընտրությունը միայն կնպաստի քննարկվող հարցերի լուծմանը : Վերոնշյալ առաջադրանքները կատարելիս ուսուցիչը նույնպես պետք է ցույց տա իր ակտիվ գործունեությունը: Հեշտ և արագ կողմնորոշվելու համար երբեմն- երբեմն պետք է միջամտել, ուղղություն ցույց տալ աշակերտներին: Հարմար մեթոդի օգնությամբ

[1] Գյուրջինյան Դ., Գալստյան Ա., Ալեքսանյան Թ., Մայրենի 5, Եր.,2011թ.:
[2] Գյուրջինյան Դ., Գալստյան Ա., Ալեքսանյան Թ., Մայրենի 6, Եր.,2007թ.:

աշակերտներն ավելի շուտ կընկալեն առաջադրանքների իմաստը: Այսպես՝ 5-րդ դասարանում տրված է հետևյալ պահանջը . « Ի՞նչ գիտես մեր այբուբենի մասին : Պատմիր մեր գրերի և նրա ստեղծող սուրբ Մեսրոպ Մաշտոցի մասին»: Ուսուցիչը կարող է կիրառել Հասկացությունների քարտեզ մեթոդը: Գրատախտակին գրում է Մեսրոպ Մաշտոց բառերը և շրջանի մեջ առնում, այնուհետև պահանջում, որ դասարանը թվարկի ուղեկից բառեր, գաղափարներ: Ասենք՝ առաջին ուսուցիչ, հանճարեղ գիտնական, սրբություն սրբոց, Տարոնի Հացեկաց գյուղ, Օշական, Վաղարշապատ, Խոսրով 3-րդ թագավորի արքունիք, կաթողիկոս, Սահակ Պարթև, Դանիելյան գրեր և այլն: Վերջապես ստացվում է մի պատկեր , որին նայելով աշակերտները արագ կողմնորոշվում և հեշտությամբ կատարում են առաջադրանքը : Պասիվ և թույլ սովորող աշակերտներն անգամ, ուղեկից բառերին նայելով, կարող են որևէ միտք հիշել և ամբողջացնել դրանք ու ստանալ պատմություն: Նմանատիպ թեմաները կարելի է ուսումնասիրել նաև այլ մեթոդների օգնությամբ: Այսպես՝ «Գարուն բառը ի՞նչ զգացումներ և մտքեր է արթնացնում»: Գործադրենք Ապագայի անիվ մեթոդը: Ուսուցիչը գրատախտակին գրում է հենակետային բառը (Գարուն) և առաջարկում դրանից բխող , գարնանային հույզեր արթնացնող բառեր , բառակապակցություններ, մտքեր նշել, օրինակ՝ գարուն - արևոտ օրեր, բողբոջներ, ծաղկած ծառեր, ծաղիկներ, ծիածան , ամպրոպ, կանաչ մարգեր և այլն , դրանք էլ իրենց հերթին կարող են բաղդատվել: Վերջակետին հասնելու դեպքում միայն կարող ենք հանձնարարել կա՛մ փոքրիկ շարադրություն գրել, կա՛մ էլ բանավոր ելույթ ունենալ:Գրավոր խոսքին զուգահեռ պետք է զարգացնել նաև բանավորը:Անհերքելի փաստ է,որ որքան համարձակ ու անկաշկանդ խոսեն, այնքան կզարգանա նրանց բանավոր խոսքը, որքան ճիշտ և գեղեցիկ արտասանեն, այնքան կզարգանան նրանց ճարտասանական հմտությունները: Բնականաբար, այս աշխատանքները ժամանակատար են, իսկ դասաժամը՝ ընդամենը 45 րոպե: Եթե ընդհանրացնելու լինենք, ապա կարող ենք ասել, որ միշտ չի ստացվում ծավալվել, աշխատել այնպես, ինչպես նպատակադրվել ես : Երբեմն կարելի է դրանք թողնել որպես տնային աշխատանք՝ հանձնարարելով համապատասխան գրականություն: Այս դեպքում ուսուցիչը և՛ դասաժամն է տնտեսում, և՛ ստուգում է աշակերտների ինքնուրույնությունն ու պատասխանատվությունը:

Ուսուցիչը, հաշվի առնելով ուսումնական գործընթացի տեսակները, ինչպես նաև իր մոտեցումը ,կարող է յուրաքանչյուր առաջադրանք յուրովի կատարել տա: Եթե գտնում է, որ խմբային գործունեության ժամանակ տուժում է թույլ սովորող աշակերտը, ուրեմն ,նրանց կարող է անհատական առաջադրանքներ տալ:

Միանշանակ ճիշտ չէ առաջնորդվել միայն մեկ տեսակով, պետք է կիրառել ուսումնական գործընթացի բոլոր տեսակները, աշակերտին սովորեցնել տարբեր ձևերով հանդես գալը: Աշակերտը պետք է կարողանա իրեն դրսևորել ուսումնական գործընթացի բոլոր տեսակներում: Չպետք է սահմանափակել աշակերտների գործունեության ձևերը՝ պատճառաբանելով որոշ խանգարող հանգամանքներ: Աշակերտների գործունեության տարբեր ձևերի գործածությունը ստեղծում է համագործակցային մթնոլորտ, որի առկայությունը ժամանակակից դասին ներկայացվող պահանջներից մեկն է :

Դասագրքերի լեզվական առաջադրանքներից որոշներում պահանջվում են զուտ ուղղագրության հետ կապված աշխատանքներ : Բնականաբար, այդ առաջադրանքները կատարվում են միայն դասագրքերի շրջանակներում: Ուսուցիչը հետևողական պետք է լինի առաջադրանքների ստուգման հարցում և պարտադիր պետք է ավելացումներ անի: Նշված առաջադրանքները հնարավորություն են տալիս ուսուցչին՝ իրագործելու մեկ այլ աշխատանք՝ նախապես կազմած թեմատիկ բառացանկերի ուղղագրությունը:

Ինչպես տեսնում ենք, անելիքները շատ են, դասագրքերը՝ հագեցված տարաբնույթ աշխատանքներով, ու այդ բազմազանության մեջ ուսուցիչը կարող է ցույց տալ իր մանկավարժական վարպետությունը, փայլել իր հմտությամբ, մեթոդների կիրառման , դասն ակտիվ ու գրագետ վարելու կարողությամբ:

Գրականություն

1. Գյուլազյան Վ., Առուշանյան Լ., Գասպարյան Մ., Ուսուցչի ուղեցույց տետր Եր., 2009թ.:
2. Մեթոդական նամակներ, Մայրենի, 5 - 6-րդ դասարաններ,էջ 3, 2011-2012թթ.:
3. Գյուրջինյան Դ., Գալստյան Ա., Ալեքսանյան Թ., Մայրենի 5, Եր.,2011թ.:
4. Գյուրջինյան Դ., Գալստյան Ա., Ալեքսանյան Թ., Մայրենի 6, Եր.,2007թ.:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Ծովինար Հասրաթյան - Ակ.Ս.Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն, ավագ դասախոս
E-mail: tsovinar-asratyan@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Խանյանը: